ԱՄՆ-ի արտաքին քաղաքական առաջնահերթությունները. Չինաստան

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 14.07.2025[1]

Սեղմագիր

ԱՌՎԱԿ կենտրոնի 2025 թ. հուլիսի 9-ի մեկնաբանությունը վերլուծում է ՉԺՀ-ի ռազմավարական դիրքորոշումն՝ ընթացիկ գլոբալ հակամարտությունների և ԱՄՆ-ի փոփոխվող արտաքին քաղաքական առաջնահերթությունների համատեքստում: Ուշադրության կենտրոնում Չինաստանի արտաքին գործերի նախարար Վան Ի հայտարարությունն է ուկրաինական հակամարտությունում Ռուսաստանի պարտության ոչ շահավետության մասին, ինչպես նաև Պեկինի իրական շահերի բացահայտումը՝ ուկրաինական հակամարտության ձգձգումը՝ ներգրավված բոլոր կողմերի ռեսուրսները սպառելու համար: Վերլուծությունը ներառում է նաև ամերիկյան ռազմավարության շեշտադրումների փոփոխությունը ՌԴ առնչությամբ՝ ուղղակի ճնշումից դեպի Մերձավոր Արևելքի և Հարավային Ասիայի ապակայունացում իրանա-իսրայելական և հնդկա-պակիստանյան առճակատման միջոցով: Նշվում է, որ այդ գործողություններն ուղղված են Չինաստանի ռազմավարական գործընկերների (Իրան, Պակիստան) և նրա աշխարհատնտեսական նախագծերի թուլացմանը, ինչպիսիք են «Մեկ գոտի, մեկ ճանապարհ»-ը: Ընդգծվում է ամերիկյան քաղաքականության ակտիվացումը Պակիստանի և թյուրքական պետությունների կազմակերպության նկատմամբ՝ որպես ՉԺՀ մայրցամաքային շահերի վրա ճնշման գործիքների: Եզրակացությունն այն է, որ ԱՄՆ-ն անցնում է Չինաստանի վրա ճակատային ճնշման՝ նրա «թիկունքի» ապակայունացման և «Թայվանական հիմնախնդրից» մայրցամաքային զսպման ռազմավարության հնարավոր վերակողմնորոշման միջոցով:

Բանալի բառեր. *ԱՄՆ-ի արտաքին քաղաքականություն, Չինաստանի ռազմավարություն, ռուս-չինական հարաբերություններ, իրանա-իսրայելական հակամարտություն, հնդկա-պակիստանյան առճակատում, Թյուրքական պետությունների կազմակերպություն, BRICS, Թայվանի հարց:*

1. Ներածություն՝ չինական դիրքորոշումն ուկրաինական հակամարտության վերաբերյալ

Հղում անելով «*իրազեկ աղբյուրներին*»՝ *South China Morning Post* պարբերականը նշում է, որ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի նախարար Վան Ին Եվրամիության դիվանագիտության ղեկավար Կայա Կալասի հետ բրյուսելյան հանդիպման ժամանակ հայտարարել է, որ «*Պեկինին ձեռնտու չէ Ռուսաստանի պարտությունը ուկրաինական հակամարտությունում*»[2]: Նա այդ դիրքորոշումը բացատրել է նրանով, որ հակառակ դեպքում ԱՄՆ-ն գործողությունների ազատություն կստանա ՉԺՀ-ի հետ լայնածավալ առճակատման համար: Այս բացահայտումը հնչել է բանակցությունների ոչ հրապարակային՝ ՁԼՄ-ներում լուսաբանման համար փակ, հատվածում: Միաժամանակ Վան Ին կտրականապես հերքել է Չինաստանի հասցեին ուղղված մեղադրանքները՝

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 10.07.2025 թ.:

[2] "China tells UE it does not want to see Russia lose its war in Ukraine: sources". South China Morning Post, 03.07.2025, https://www.scmp.com/news/china/diplomacy/article/3316875/china-tells-eu-it-cannot-afford-russian- loss-ukraine-war-sources-say (բեռնման օրը՝ 06.07.2025).

Ուկրաինական պատերազմում Ռուսաստանին ենթադրյալ աջակցության մասին, պնդելով, որ նման օգնության դեպքում Ռուսաստանը վաղուց հաղթած կլիներ:

Չինական դիվանագիտության ղեկավարի հայտարարությունն զգալի արձագանք է առաջացրել միջազգային քաղաքական ու դիվանագիտական շրջանակներում և միջազգային ԶԼՄ-ներում: Սակայն, ըստ էության, Վան Ին որևէ աղմկահարույց բան չի հայտնել ուկրաինական հակամարտության մեջ չինական շահերի վերաբերյալ: Աղմկահարույց լինելու հավանական տարբերակը այդ դիրքորոշման հրապարակային հնչեցումն էր, եթե ենթադրենք, որ հենց չինական կողմն է նպաստել գաղտնի բանակցությունների սղագրության արտահոսքին *South China Morning Post* պարբերականի համար: Այն փաստը, որ ՌԴ պարտությունը չի համապատասխանում ՉԺՀ-ի ռազմավարական շահերին, արդեն վաղուց լայնորեն քննարկվում է վերլուծական շրջանակներում: Կանխատեսումները ցույց էին տալիս, որ ուկրաինական ուղղությամբ Մոսկվայի ձախողումից հետո ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները կկենտրոնանան «*չինական օրակարգի*» վրա՝ թայվանական ճգնաժամը ռազմական պարտության և ՉԺՀ-ի ֆինանսատնտեսական անկման գործոնի վերածելու համար «*ուկրաինական փորձի*» գործարկման հեռանկարով:

2. ԱՄՆ-ի ռազմավարության փոխակերպումը՝ Ուկրաինայից Իրան և Պակիստան

Ուկրաինայում և Մերձավոր Արևելքում ծավալված գործընթացները վերլուծելով՝ ԱՌՎԱԿ կենտրոնը բազմիցս նշել է, որ Վաշինգտոնի արտաքին քաղաքականության ռազմավարության մեջ Ուկրաինայի, Գազայի և Իրանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները միջանկյալ օղակներ են հիմնական նպատակին հասնելու ճանապարհին՝ Չինաստանի, որպես աշխարհում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական և տնտեսական գերիշխանության գլխավոր մրցակցի զսպմանը: Սակայն, եթե Ջոզեֆ Բայդենի վարչակազմը Մոսկվա–Թեհրան–Պեկին առանցքը ոչնչացնելու ձգտման մեջ շեշտը դրել էր Ռուսաստանի վրա ռազմական ճնշման և Իրանի հետ համաձայնության հասնելու հնարավորության վրա, ապա Դոնալդ Թրամփի վարչակազմը, հավատարիմ մնալով այդ ռազմավարական ուղեգծին, ընտրել էր գործողությունների սկզբունքորեն հակառակ ընթացք: Դա արտահայտվել է ՌԴ-ի վրա ճնշման թուլացման նախաձեռնությամբ և իսրայելա-իրանական պատերազմի խթանմամբ: Նման հայեցակարգային շրջադարձի տրամաբանությունը կայանում է հանրապետական վարչակազմի այն համոզմունքի մեջ, որ Ուկրաինային լայնածավալ տնտեսական պատժամիջոցները և ռազմական օգնությունը չեն

թուլացրել Ռուսաստանին, այլ միայն ավելացրել են ռուս-չինական գործընկերության խորացման նախադրյալները[3]:

Ընդ որում, Իրանի հետ համաձայնության գալու ցանկացած փորձ միայն ժամանակ է տրամադրել Թեհրանին զարգացնելու իր «*միջուկային ծրագիրը*» և էլ ավելի է արմատականացրել նրա դիրքորոշումն Արևմուտքի նկատմամբ, ինչը համապատասխանում է նաև Չինաստանի՝ Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր առևտրատնտեսական գործընկերոջ և վարկատուի շահերին: Ելնելով դրանից, Դոնալդ Թրամփի թիմը կտրուկ փոխեց առաջնահերթությունները՝ Իրանը գնահատելով որպես ավելի խոցելի թիրախ արևմտյան դաշնակիցների ռազմական ճնշման համար, իսկ Ռուսաստանը՝ որպես ավելի շահագրգռված Ուկրաինայի խնդրի շուրջ ԱՄՆ-ի հետ երկխոսություն հաստատելու հարցում, նույնիսկ ի վնաս Չինաստանի հետ հարաբերությունների հեռանկարների: Ընդհանուր առմամբ, նպատակը մնում է նույնը՝ Մոսկվա–Թեհրան–Պեկին առանցքի ոչնչացումը, իսկ լայն իմաստով՝ BRICS-ի վերափոխման նախադրյալների վերացումն ավելի նշանակալի բանի, քան հռչակագրային և պաշտոնական դաշինքն է[4]:

3. Չինական ռազմավարությունը՝ հակամարտության պահպանում և ԵՄ-ի հետ մերձեցում

Ստեղծված իրավիճակում, երբ ՉԺՀ-ն համոզվել է, որ Դոնալդ Թրամփի գալուց հետո ԱՄՆ-ի և ՌԴ-ի միջև ինտենսիվ երկխոսություն կա՝ կոնկրետ պայմանավորվածություններ ձեռք բերելու հնարավորությամբ, Չինաստանի գլխավոր դիվանագետի խոստովանությունը ՌԴ-ի պարտության անցանկալիության մասին առարկայորեն կորցնում է հրատապությունն ու ինտրիգը: Չինաստանում վաղուց են ընտրել այդ ռազմավարությունը, սակայն հազիվ թե Վան Ին կարող էր իրեն թույլ տալ նման հայտարարություն և դրա արտահոսքը ՉԼՄ-ներ՝ ԱՄՆ-ում Ջ՝ Բայդենի կառավարման օրոք, ով չափազանց զգայուն էր Պեկինի կողմից Մոսկվային ուկրաինական ուղղությամբ ցանկացած ձևով աջակցելու հնարավորության հարցում:

Մեր կարծիքով, առավել հետաքրքիր է ՉԺՀ արտգործնախարարի մեկ այլ միտք, որը համարժեք արձագանք չի գտել միջազգային լրատվամիջոցներում, սակայն որի ուշադիր

[3] «Ինչո՞ւ Թրամփը դուրս չի գալիս ուկրաինական ճգնաժամի կարգավորման գործընթացից». «Россия в глобальной политике» (ռուս՝), 20.05.2025, https://globalaffairs.ru/articles/tramp-ne-vyjdet-bibi (բեռնման օրը՝ 06.06.2025):

[4] Վ. Ժարիխին, «Ռուսաստան, Իրան, այնուհետև՝ Չինաստան». «Литературная газета», (ռուս՝), https://lgz.ru/article/ rossiya-iran-a-dalee-kitay/ (բեռնման օրը՝ 06.07.2025):

ուսումնասիրությունը թույլ է տալիս արմատապես փոխել Վան Իի ողջ հայտարարության և դրանում թաքնված ուղերձների մեկնաբանությունը: Խոսելով Ռուսաստանի «*պարտության ոչ ձեռնտու լինելու*» մասին, չինացի դիվանագետը նկատի չի ունեցել, որ Պեկինին ձեռնտու է նրա հաղթանակը: Ըստ նրա՝ եթե Չինաստանը Ռուսաստանին օգներ սպառազինությամբ և ֆինանսներով, ապա վերջինս վաղուց հաղթանակ տոնած կլիներ Ուկրաինայի նկատմամբ: Սակայն Չինաստանը, նախարարի խոսքով, դա չի արել, ինչը պետք է մեկնաբանել որպես Պեկինի՝ ռուսական հաղթանակի նկատմամբ դժկամության արտահայտություն: Հետևաբար, ՉԺՀ-ն հավասարապես անբարենպաստ վիճակում կհայտնվի ՌԴ-ի և՛ պարտությանը, և՛ հաղթանակի դեպքում:

Ըստ երևույթին, հենց դա է նկատի ունեցել չինական դիվանագիտության ղեկավարը՝ Բրյուսելին հասկացնելով, որ Պեկինը դեմ չի լինի ուկրաինական պատերազմին չմիջամտելու քաղաքականության պահպանմանը, եթե ԵՄ-ը շարունակի աջակցել Կիևին և չհրաժարվի Դ. Թրամփին համոզելու փորձերից՝ վերսկսել ԱՄՆ-ի ռազմական և ֆինանսական օգնությունն Ուկրաինային: Սա նշանակում է, որ Չինաստանին անհրաժեշտ է ուկրաինական պատերազմի շարունակականությունն առանց հաղթողին որոշելու՝ պահպանելով դրանում որևէ մասնակցություն ունեցող բոլոր կողմերի ուժերի և ռեսուրսների սպառման դինամիկան:

Պեկինում մտավախություն ունեն, որ Վաշինգտոնի և Մոսկվայի միջև կարող են պայմանավորվածություններ ձեռք բերվել Իրանի հետ Ուկրաինայի, այսպես կոչված, «*փոխանակման*» վերաբերյալ, որի պայմանների համաձայն ԱՄՆ-ը կդադարեցնի լայնածավալ ռազմատեխնիկական և ֆինանսական աջակցությունը Կիևին, մինչդեռ ՌԴ-ն կշարունակի չմիջամտելու քաղաքականությունը Իրանի շուրջ ստեղծված ամերիկա-իսրայելական երկյակի ռազմական ճնշման համապատկերում: Ըստ էության, Ուկրաինայի և Իրանի շուրջ ստեղծված իրավիճակն արդեն իսկ խոսում է նման պայմանավորվածության առկայության մեծ հավանականության մասին: Դ. Թրամփի վարչակազմը դեռ մի քանի ամիս առաջ վերստուգման էր ենթարկել Ուկրաինային անհատույց ֆինանսական օգնության տրամադրման և վարկավորման ամբողջ համակարգը, իսկ Պենտագոնն արդեն իսկ դիմել էր Կիևին ռազմական մատակարարումների կտրուկ կրճատմանը[5]: Մոսկվան, իր հերթին, BRICS-ի գրեթե բոլոր անդամների և, նույնիսկ, որոշ եվրոպական երկրների կողմից Իրանի ռմբակոծությունների վերաբերյալ կտրուկ գնահատականների համապատկերում բավականին պասիվ արձագանքեց այս իրադարձությանը, ինչն արձանագրեցին նույնիսկ

[5] «Pentagon halting some promised munitions for Ukraine». Politico, 01.07.2025, https://www.politico.com/news/2025/07/01/pentagon-munitions-ukraine-halt-00436048?s=09 (բեռնման օրը՝ 07.07.2025):

նրա արևմտյան ընդդիմախոսները[6]: «*12-օրյա պատերազմի*» օրերին Մոսկվայի կողմից Թեհրանին ցուցաբերվող գործնական օգնության մասին առնվազն բաց աղբյուրներում որևէ տեղեկություն չկա: Հաշվի առնելով այս իրողությունը՝ Պեկինը կարող է պատճառներ ունենալ չվստահելու Մոսկվային, որն իր քայլերով օգնում է ԱՄՆ-ին ազատել իր ձեռքերը՝ ուշադրությունը դեպի Մերձավոր Արևելք, Իրան և հետո Չինաստան ուղղելու համար:

Այս լույսի ներքո ուրվագծվում են նաև ՉԺՀ-ի՝ ԵՄ-ի հետ մերձեցման ռազմավարության ուրվագծերը՝ ի հակակշիռ ամերիկա-ռուսական ենթադրական գործարքի կնքման գործընթացների: Պեկինը եվրոպական ուղեգծի վրա արդյունավետորեն օգտագործում է ԱՄՆ-ի և ԵՄ-ի տարաձայնությունները ուկրաինական խնդրի և ՆԱՏՕ-ի ֆինանսավորման, առևտրատնտեսական պատժամիջոցների, էներգետիկ անվտանգության և այլ հարցերի լայն շրջանակի վերաբերյալ: Այս տարաձայնությունները, որոնք ընկած են եվրոպական երկրների կողմից աշխարհում իրենց գլոբալ դիրքերը պահպանելու համար նոր հենարանի ինտենսիվ որոնման հիմքում, նպաստում են Հին աշխարհում Չինաստանի առևտրատնտեսական և քաղաքական ազդեցության ընդլայնմանը: Վաշինգտոնում արդեն նկատել են այդ միտումը՝ իրենց համար հատկապես անբարենպաստ համարելով այն հանգամանքը, որ Չինաստանը հաջողությամբ նվաճում է քաղաքական-տնտեսական փոխգործակցության նորանոր մակարդակներ ԱՄՆ-ի ավանդաբար ամենամտերիմ եվրոպական դաշնակցի՝ Մեծ Բրիտանիայի հետ[7]:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, կարելի է եզրակացնել, որ Պեկինը, միանշանակ, քաղաքական-դիվանագիտական աշխատանք է տանում ուկրաինական հակամարտությունն հնարավորինս երկարաձգելու և դրանից ԱՄՆ-ի լիարժեք ելքը թույլ չտալու ուղղությամբ: Նույն նպատակով նա կշարունակի օգնություն ցուցաբերել Ռուսաստանին, հատկապես ռուսական ռազմարդյունաբերական համալիրին պատժամիջոցների ենթակա բարձր տեխնոլոգիական արտադրանքով[8] ապահովելու մասով՝ չնայած նման պրակտիկայի բացակայության մասին չինացի քաղաքական գործիչների հայտարարություններին:

---

[6] «Չի ուզում և չի կարող: Ինչո՞ւ Ռուսաստանը չաջակցեց Իրանին Իսրայելի հարձակումից հետո»., BBC, (ռուս), 19.06.2025, https://www.bbc.com/russian/articles/cy9x4lr0qw4o (բեռնման օրը՝ 07.07.2025):

[7] «Եվ դո՞ւ բրիտ: ԱՄՆ-ը Մեծ Բրիտանիային նախազգուշացրել է Չինաստանի հետ համագործակցությունից». “Kommersant” (ռուս), 05.05.2025, https://www.kommersant.ru/doc/7696080 (բեռնման օրը՝ 07.07.2025):

[8] Ն Շեր, «Երկակի նշանակության համագործակցություն. ինչպես է աճում Չինաստանի դերը Ռուսաստանի պաշտպանության ոլորտում». Carnegie Politika (ռուս), 17.05.2024, https://carnegieendowment.org/russia-eurasia/politika/2024/05/behind-the-scenes-chinas-increasing-role-in-russias-defense-industry?lang=ru (բեռնման օրը՝ 07.07.2025):

Իսկ Չինաստանի գործողությունների էությունը հանգում է Արևմուտքի և Ռուսաստանի համաժամանակյա ու հավասարակշռված աջակցությանը, որը բացառում է Ուկրաինայում դիմակայության արդյունքների արագ լուծման հնարավորությունը՝ ի շահ որևէ մեկի ակնհայտ օգտին:

4. Չինաստանի ռազմավարությունը՝ Իրան և Պակիստան

Իրանի և Կենտրոնական Ասիայի ուղղություններում ՉԺՀ-ն գործում է առավել ազատ և բացահայտ: Սա, հավանաբար, վկայում է այն մասին, որ Պեկինը մտահոգված է իրանական և պակիստանյան իշխանությունների դիրքերի խոցելիությամբ, քանի որ այդ երկրները հայտնվել են ԱՄՆ և նրա դաշնակիցների ուժեղ քաղաքական ու ռազմական ճնշման ներքո: Սա բացատրում է, թե ինչու Չինաստանը բավականին կոշտ ձևով դեմ արտահայտվեց սանձազերծված հակահիրանական ռազմական արշավին և նախաձեռնեց ռազմական նշանակության տեխնիկայի տեղափոխումն ԻԻՀ, ինչպես դա տեղի ունեցավ ընթացիկ տարվա ապրիլ-մայիս ամիսներին հնդկա-պակիստանյան հարաբերությունների սրման ժամանակ:

Ինչպես վկայում են միջազգային աղբյուրները, Իրանի վրա իսրայելական առաջին օդային հարձակման օրվանից Պեկինը Իրան է ուղարկել ՉԺՀ-ի ռազմաօդային ուժերի առնվազն 3 ռազմատրանսպորտային ինքնաթիռներ՝ ռազմական նշանակության բեռներով: Մի շարք ռազմական փորձագետներ կարծում են, որ «*12-օրյա պատերազմի*»[9] վերջին փուլում հենց այդ չնույնականացված տեխնիկայի կիրառմամբ էր պայմանավորված իրանական ՀՕՊ-ի արդյունավետության որակական աճը, ինչպես նաև իսրայելական տարածքի վրա հրթիռային հարվածների ճշգրտությունը: Վերլուծաբանների կարծիքով՝ հարկ է ենթադրել, որ իսրայելա-իրանական հրադադարով չինական հատուկ նշանակության ապրանքների մատակարարումները չեն դադարել, քանի որ կարճաժամկետ հեռանկարում շատ բարձր է մնում Թել Ավիվի և Թեհրանի միջև ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը:

Տեղեկություններ կան նաև Թեհրանի և Պեկինի կողմից Իրանին 4++[10] կործանիչների սերնդին պատկանող չինական *J-10* 36 միավոր ինքնաթիռների արտահանման տարբերակի մատակարարման գործարքի մասին: Եթե ավելի վաղ Չինաստանը խափանել էր գործարքը,

[9] S. Yan "China sends mystery transport planes into Iran". The Telegraph, 17.06.2025, https://www.telegraph.co.uk/world-news/2025/06/17/china-sends-mystery-transport-planes-into-iran/ (բեռնման օրը՝ 07.07.2025).

[10] «Սու-35-ը հետ կդնեն որպես պահուստ». "Kommersant" (ռուս՝), 26.06.2025, https://www.kommersant.ru/doc/7835618 (բեռնման օրը՝ 07.07.2025):

քանի որ չէր ցանկանում Իրանին կործանիչներ վաճառել բարտերի սկզբունքով (ինքնաթիռներ՝ հում նավթի դիմաց), ապա փոխադարձ վճարման այս ձևի վերաբերյալ ներկայիս համաձայնությունը վկայում է իրանական ՌՕՈՒ-ի և ամբողջ պաշտպանական ներուժի վիճակով Պեկինի խիստ մտահոգության մասին:

Չինաստանում հասկանում են, որ Իրանը չի կարող առանց չինական էական աջակցության Ռուսաստանի պես երկար դիմանալ, ինչպես նաև, որ Արևմուտքի հետ այնտեղ իշխող ռեժիմի հարաբերությունների ծայրահեղ վատթարացման պատճառով չի համագործակցի ԱՄՆ-ի հետ: Իսկ դա, իր հերթին, կխրախուսի Վաշինգտոնին և դաշնակիցներին կրկին դիմել ԻԻՀ-ում գործող քաղաքական համակարգը վերացնելու փորձին: Այս դեպքում չինական տնտեսության աճի երկու հիմնարար գործոնները՝ Իրանից էժան նավթի ներմուծումը և «*Մեկ գոտի, մեկ ճանապարհ*» առևտրային և էներգետիկ մեգանախագիծը (ներկայումս դրա հիմնական մայրուղիներն անցնում են իրանական տարածքով), կակտիվանան՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Եթե Առաջավոր Ասիայում Չինաստանի հիմնական հենարանը՝ ի դեմս Իրանի, փլուզվի, ապա ապակայունացման ալիքը կտարածվի դեպի արևելք՝ ընդգրկելով Պակիստանը, Կենտրոնական Ասիան և հենց Չինաստանի հյուսիս-արևմտյան տարածքները, որոնք Պեկինի համար անջատողական սպառնալիքներով հղի ապակայունացնող գոտի են: Ընդհանուր առմամբ, դա անխուսափելիորեն կհանգեցնի Չինաստանի անվտանգության համակարգի համապարփակ անկմանն ամբողջ ասիական տարածաշրջանում, ինչի մասին միաձայն վկայում են մի շարք միջազգայնագետ-փորձագետներ[11]:

Պեկինի համար ևս մեկ էական ազդանշան կարող է համարվել Պակիստանի նկատմամբ ամերիկյան քաղաքականության ակտիվացումը՝ Եվրասիական մայրցամաքի սրտում չինական աշխարհառազմավարական դիրքերը թուլացնելու՝ Վաշինգտոնի մտադրության համատեքստում: 2025 թ. հունիսի վերջին *Foreign Affairs* պարբերականը, հղում անելով ամերիկյան հատուկ ծառայությունների աղբյուրներին, հայտնել էր, որ Վաշինգտոնը մտահոգված է Պակիստանի կողմից միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների ստեղծման ծրագրով, որոնք կարող են հասնել ԱՄՆ-ի տարածք[12]: Պարբերականի համաձայն՝ Իսլամաբադը վերանայում է միջուկային զսպման իր դոկտրինը

[11] «ԱՄՆ-ն Չինաստանին հարվածում է Իրանի միջոցով: Փորձագետներն իրանա-իսրայելական պատերազմի և դրա հետևանքների մասին»: Украина.РУ (ռուս.), 17.06.2025, https://ukraina.ru/20250617/ssha-bt-po-kitayu-cherez-iran-eksperty-ob-irano-izrailskoy-voyne-i-ee-posledstviyakh-1063934154.html (բեռնման օրը՝ 07.07.2025):

[12] «Պակիստանը մշակում է միջմայրցամաքային հրթիռ, որը կարող է հասնել ԱՄՆ». «Восточный экспресс» (ռուս.), 26.06.2025, https://asia24.media/news24/pakistan-razrabatyvaet-mezhkontinenttalnuyu-raketu-sposobnuyu-dostich-ssha-/ (բեռնման օրը՝ 07.07.2025):

և ձգտում մարտավարական միջուկային սպառազինության զինանոցը համալրել ռազմավարական նշանակության կրիչներով և մարտագլխիկներով: Ամերիկյան հատուկ ծառայություններից այդ տեղեկատվության արտահոսքը կարող է նշանակել, որ Վաշինգտոնն ինքը մտադիր է վերանայել սեփական միջուկային դոկտրինը՝ Եվրասիական մայրցամաքում իրեն ուղղված հնարավոր սպառնալիքների ցուցակում Պակիստանի գործոնը ներառելով ռուսականի և չինականի հետ համահավասար:

Չի կարելի լիակատար վստահությամբ պնդել, թե ամերիկյան հատուկ ծառայությունների տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, սակայն ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ «*տեղեկատվական արտահոսքը*» տեղի ունեցավ իրանցի զինվորականների սպառնալիքներից անմիջապես հետո, որոնք հայտարարեցին, որ Իսլամաբադը, Իրանի վրա իսրայելական միջուկային հարձակման դեպքում, նույնպիսի հարված կհասցնի Իսրայելին[13]: Ակնհայտ է, որ հենց դա է ծառայել Վաշինգտոնի կողմից իր միջուկային դոկտրինի նախատեսվող վերանայման գլխավոր խթանը, քանի որ դաշնակից Իսրայելին սպառնացող վտանգն արդեն իսկ կարող է սպառնալիք համարվել հենց ԱՄՆ-ի համար, Իսլամաբադի պլանների առկայությունից կամ բացակայությունից անկախ՝ Միացյալ Նահանգների տարածքը հասանելի կդառնա պակիստանյան ռազմավարական հրթիռների համար:

Այսպիսով, ԱՄՆ-ի վարքագծում երևում են մեկ այլ աշխարհաքաղաքական առանցքի՝ Իրան–Պակիստան–Չինաստան խարխլման ծրագրի բոլոր նշանները, ինչը վերջնականապես ձևավորվել է Քաշմիրի իրադարձությունների և «*12-օրյա պատերազմի*» ընթացքում: Հնդկա-պակիստանյան բախումները և իրանա-իսրայելական առճակատումը ՉԺՀ-ի դեմ մեկ մեծ ռազմաքաղաքական արշավի օղակներն են, որոնք ուղղված են ասիական ուղղությամբ Չինաստանի հիմնական գործընկերների և դաշնակիցների մասնատմանը և չեզոքացմանը: Այս համատեքստում տրամաբանական է հնչում նաև 2024 թ. հունվարին տեղի ունեցած միջադեպը, երբ Թեհրանն ու Իսլամաբադը, որոնք նախկինում երբեք չեն կռվել և հավակնություններ չունեն միմյանց նկատմամբ, *«Ջեյշ ալ Զոլմ»* արմատական իսլամիստական խմբավորման սադրանքից հետո հայտնվել էին լայնածավալ պատերազմի եզրին[14]: Սակայն հակամարտությունն այն ժամանակ արագ սպառվեց, քանի

[13] «Պակիստանը միջուկային զենքով կհարվածի Իսրայելին, եթե վերջինս այն օգտագործի Թեհրանի դեմ»,- պնդում է իրանական ռեժիմի սպան». Gazeta Express (ռուս), 16.06.2025, https://bit.ly/44v5avD (բեռնման օրը՝ 08.07.2025):

[14] «Ինչ է կատարվում Իրանի և Պակիստանի միջև և արդյոք պատերազմ կլինի». PUAMO (ռուս), 24.01.2024, https://riamo.ru/articles/aktsenty/chto-proishodit-mezhdu-iranom-i-pakistanom-i-budet-li-vojna/ (բեռնման օրը՝ 08.07.2025):

որ կողմերը ակնհայտորեն հասկանում էին այն փաստը, որ ինչ-որ երրորդ ուժերի խիստ անհրաժեշտ էր լարվածություն և թշնամանք ստեղծել ավանդական բարեկամ հարևանների միջև: Պատահական չէ, որ այդ օրերին հենց Պեկինն էր առաջինն արձագանքել այս սրացմանը և կողմերին առաջարկել իր միջնորդական ծառայությունները՝ իրավիճակը լիցքաթափելու և նրանց միջև խաղաղություն հաստատելու համար[15]: Նույնիսկ այն ժամանակ Պեկինում, Իսլամաբադում և Թեհրանում արագ կողմնորոշվեցին, թե ինչ է տեղի ունենում, և, հետևաբար, առանց հատուկ բարդությունների վերացրեցին բոլոր հակասությունները պակիստանա-իրանական քաղաքական և դիվանագիտական գործում:

Չինաստանի կողմից նույնպիսի ակտիվություն ցուցաբերվեց նաև հնդկա-պակիստանյան վերջին հակամարտության ժամանակ, երբ Պեկինը, մի կողմից, Իսլամաբադին ցուցաբերեց հնարավոր աջակցություն հետախուզության և ռազմական նշանակության մատակարարումների ոլորտում, սակայն, մյուս կողմից, գործուն քաղաքական և դիվանագիտական ջանքեր գործադրեց ռազմական գործողությունները դադարեցնելու համար[16]: Դրանց հետագա դինամիկան սպառնում էր տարածաշրջանի վերջնական ապակայունացմանը՝ Պակիստանում ՉԺՀ-ի ամուր տնտեսական և աշխարհաքաղաքական դիրքերի կորստի մեծ հավանականությամբ, որը, Իրանի հետ միասին, համարվում է Պեկինի ամենակարևոր դաշնակիցը[17] և ապահովում Հնդկաստանի ռազմական զսպումն ու Չինաստանի՝ Հնդկական օվկիանոս դուրս գալու հնարավորությունը: Իրանական և պակիստանյան խնդիրներից բացի, Պեկինը ստիպված է հաշվի առնել նաև Թյուրքական պետությունների կազմակերպության (ԹՊԿ) ակտիվացումը: Այս կազմակերպությունը ձևավորում է «Թուրան» միավորման օրակարգը՝ վերածելով այն վերազգային աշխարհաքաղաքական և պաշտպանական դաշինքի: Սա, իր հերթին, սպառնում է ոչ միայն վնասել Չինաստանի շահերը Կենտրոնական Ասիայում, այլև նոր խթան հաղորդել անջատողական տրամադրություններին Չինաստանի ույղուրաբնակ հյուսիս-արևմուտքում:

[15] «Պակիստանն ու Իրանը փոխադարձ հարվածներից հետո պայմանավորվեցին հրադադարի մասին». РБК (ռուս.), 19.01.2025, https://www.rbc.ru/politics/19/01/2024/65aa95c69a7947c6af1cef44 (բեռնման օրը՝ 08.04.2025):

[16] «Չինաստանը հայտարարել է հնդկա-պակիստանյան կարգավորման հարցում կառուցողական դեր խաղալու պատրաստակամության մասին». Интерфакс (ռուս.), 10.05.2025, https://www.interfax.ru/world/1024919 (բեռնման օրը՝ 08.07.2025):

[17] «Չին-պակիստանյան առանցքը «հարվածել» է Հնդկաստանին». «Независимая газета» (ռուս.), 10.06.2024, https://www.ng.ru/world/2024-06-10/6_9026_india.html (բեռնման օրը՝ 08.07.2025):

5. Եզրակացություն. ԱՄՆ-ի նոր ռազմավարությունը և մարտահրավերները Չինաստանի համար

Ընդհանուր առմամբ, Չինաստանի համար վերը նշված բոլոր խնդրահարույց տարրերը վկայում են, որ Պեկինը գործ ունի աշխարհում իր գլխավոր աշխարհառազմավարական և տնտեսական մրցակցի վրա Դ. Թրամփի վարչակազմի կողմից արդեն իսկ արտոնված ճակատային ճնշման հետ: Այսպիսով, Վաշինգտոնը ջանում է ՌԴ-ին խաղից դուրս բերել Ուկրաինայի հարցով նրա հետ պայմանավորվածությունների հաշվին և Իրանի ու Պակիստանի վրա ռազմական ճնշման միջոցով, իսկ Կենտրոնական Ասիայում թյուրքական գործոնի համախմբման միջոցով թուլացնել ՉԺՀ-ի աշխարհառազմավարական դիրքերը նրա արևմտյան մայրցամաքային սահմանների պարագծում և ապակայունացնել «*Մեծ Մետաքսի ճանապարհի*» հիմնական առևտրային երթուղիների անցկացման գոտիները: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ն վերանայել է Չինաստանին ուղղված առաջնային հարվածի ծրագիրը, որը ենթադրում էր սրացում «*Թայվանական հարցի*» շուրջ, ինչն անընդհատ քննարկվում էր ամերիկյան վարչակազմի կողմից Դ. Թրամփի առաջին նախագահության ընթացքում: «*Ուկրաինական փորձը*» կարող է հանրապետականներին ստիպել վերանայելու այս տարբերակն՝ այն անարդյունավետ և վտանգավոր համարելով ԱՄՆ-ի և նրա խաղաղօվկիանոսյան դաշնակիցների համար: Ինչպես երևում է, Վաշինգտոնում ճիշտ են համարել կենտրոնանալ ՉԺՀ-ի շահերի մայրցամաքային գոտու վրա և միայն նրա «*թիկունքում*» ապակայունացման օջախներ ստեղծելուց հետո, որոշակի փուլում, հնարավոր է, սրել իրավիճակը Խաղաղ օվկիանոսի տարածաշրջանում: Սա նոր մարտահրավեր է Չինաստանի համար և նոր իրականություն, ըստ որի նա պետք է վերակառուցի առաջնահերթությունները և ճիշտ բաշխի իր ուժերը՝ գլոբալ սպառնալիքները զսպելու համար: